

ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԶՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ջանկսուլո ՐՈԼՈՆՅԵԶԻ (Իտալիա)

1. Չբացատրված կամ դեռ բավարար ձևով չբացատրված հայերեն բառերից մենք ընտրել ենք մեկը, որը, մեր կարծիքով, բավական հետաքրքիր է նրա ստուգաբանական վերլուծության պարունակած մեթոդոլոգիական իմպլիկացիաների, ինչպես նաև այն ոչ աննշան նպաստի առումով, որ բերում է այդ ստուգաբանությունը հայոց լեզվի պատմությանը՝ մի քանի բաց հարցերի լուսաբանման և ոչ ճշգրտորեն նկարագրված հնչյունական օրենքներն ավելի հստակ սահմանելու համար:

2. Հայ գրավոր գրականության սկզբնավորումից ի վեր, բառընտանիքներից մեկի կենտրոնում կարող ենք առանձնացնել վէր բառը, որը լավ վկայված է արդեն Աստվածաշնչի թարգմանության մեջ (որտեղ այն համապատասխանում է հունարեն πῆλγος, ῥαῦμα, ἔλκος, μῶλωψ, σὺντρύμμα բառերին. Վուլդատեն այդ նույն կոնտեքստներում ներկայացնում է լատիներեն *plaga*, *vulnus*, *ulcus*, *livor* ձևերը) և ոսկեդարի հեղինակների մոտ:

Այս բառին բնորոշ է որքան կենսունակություն (ժամանակակից հայերենում այն շարունակվում է վերջ ձևում), նույնքան էլ բեղունություն (արդեն հին են վիրաուր, վիրաուրեմ, վիրաուրոսիւն, վիրաց և այլ բարդություններ՝ նախաշեշտ վանկերի ձայնավորային է/ի կանոնավոր հերթագայությամբ):

3. Պետք է նշել, որ հայ. վէր-ը անցյալ գարի սկզբից արդեն գրավել է առաջին հետազոտողների ուշադրությունը, որոնք նմանություններ և համապատասխանություններ էին նկատել նրա և այլ լեզուների բառերի միջև: Այդ բառային համեմատությունները մեզ թույլ են տալիս ուրվագծելու անցյալ դարում ստուգաբանական հետազոտության զարգացման մի հետաքրքիր պատկեր:

Բեռլինցի արևելագետ Յուլիուս Հայնրիխ Կլապրոթը՝ «Փարիզի ասիական ընկերության» հիմնադրողներից մեկը, որը ճանապարհորդել է Ռուսաստանում և Կովկասի շրջաններում, իր «Բազմալեզու Ասիա» գրքում ներկայացնում է հայերեն բառերի մի ցուցակ՝ այլ լեզուների տվյալների համեմատությամբ: Այդ բառերի մեջ գտնում ենք նաև հայ. վէր-ը, որը համեմատում է լատ. *ferire* և թուրք. *bereh* բառերի հետ¹: Եթե այսօր այդ համեմատության անհիմն լինելը ակնհայտ է, և դա բնական է, այնուամենայնիվ պետք է նկատել, որ, ի զարմանս մեզ, Յու. Հ. Կլապրոթի այլ բառերի համար արված համեմատությունները դեռ պիտանի են և արժանի մոռացումից փրկվելու, որպեսզի ավելի լավ ծանոթանանք այն դերին, որ կատարել են մեր գիտության պիոներները: Արևելագետ Բրոսե կրտսերը իր «Ընդհանուր ակնարկ վրացերեն լեզվի» գրքում հայ. վէր-ը կամայականորեն և անմտածված ձևով մոտեցնում է վրաց. *gerši*-ին²:

Հայնրիխ Պետերմանը իր «Հայոց լեզվի քերականություն» գրքում հայ. վէր-ը համեմատում է սանսկր. *वृता*--ի հետ³, իսկ որոշ ժամանակ անց այդ նույն համեմատությունը, լատին. *vulnus*-ը ներառելով, ընդարձակած վերա-

¹ J. Klaproth. Asia polyglotta. Paris, 1823, p. 106.

² Brosset le jeune. Aperçu général de la langue géorgienne.—Nouveau Journal Asiatique, 14 (1834), p. 372.

³ H. Petermann. Grammatica Linguae Armeniacae. Berlin, 1837, p. 18.

դառնում ենք Ֆրիդրիխ Վինդիշմանի «Հայերենի հիմքը արիական լեզվաճյուղում» գրքում⁴:

Պոլ դը Լագարդի կողմից պարսկ. vērān-ին հղումը հնչյունաբանորեն շեղում է, ոչ համապատասխան, հետևաբար և սխալ⁵. այն գալիս է միջին իրանական avēran-ից, որտեղից ծագում է հայերեն ամբան-ք փոխառությունը (հմտ. նաև միջին իրան. avērak-ից փոխառած հայ. ամբակ-ը): Ի դեպ, Պ. դը Լագարդը հետագայում քննադատել է իր նախկին «բավական սխալ» վարկածը⁶:

Հնչյունական անհամապատասխանությունների հետևանքով հայ. վեր-ի և անգամ Ավեստայի xvarā--ի համեմատությունը, որ գերմանացի իրանագետ Ֆրիդրիխ Զուստին է Ավեստայի լեզվի իր ձեռնարկում առաջարկել, դառնում է անընդունելի⁷:

(Կտ Ս. Դևրվիշյանի հայ. վեր-ը (որին նա միացնում է նաև հայ. ուռն «մուրճ» բառը) պետք է հանգեցվի սանսկր. vadh- «խփել, սպանել» արմատին⁸:

Առկա կանոնների աղավաղումների, որոնց կարող է հանգեցնել անմտածված ստուգաբանական վերլուծությունը, մի օրինակ է այն բացատրությունը, որ: տվել է հայերեն վեր-ին հունգարացի գիտնական Լ. Պատրուբանին «Հանդես ասորյայի» իր մի հոդվածում: Նա հայ. վեր-ի հիմքում վերականգնում է հնդեվրոպական մի բարդություն, որի առաջին անդամը եղել է *epi- նախածանցը, երկրորդը՝ *ei- «գնալ» արմատը, իսկ երրորդ բաղադրիչը՝ *ra մասնիկը: Այս բարդությունը ծագումնաբանորեն ունենալով «մարմնոյ վրայ գնացող» նշանակություն, հայերենում պետք է որ հանգեր խոց, վերք» իմաստին⁹, եթե, իհարկե, բացահայտորեն թուրք տանք առատ երևակայությանը:

Հ. Աճատյանն իր ստուգաբանական բառարանում առաջարկված ստուգաբանությունների ցուցակը ֆզրափակում է, ասելով, որ հայ. վեր-ը ունի պարզապես դիպվածային, ոչ սպասելի և պատահական նմանություն արբ. va-fer-, սնսկր. vradā-, հին սլավ. ոռսերեն, լեհերեն rađa, ինչպես նաև ավ. xvara-, հին վերին գերմ. sweran, swero ձևերի հետ, որոնք գալիս են հնդեվրոպական *suer- արմատից¹⁰:

Հիշյալ հայերեն բառը, վերջապես, այս կամ այն չափով չի մեկնաբանվել Հ. Հյուբշմանի, Հ. Պեդերսենի, Ա. Մեյերի, Է. Բենվենիստի, Ժ. Ռ. Զոլտայի և ինձ հայտնի այլ հայագետների ստուգաբանական հետազոտություններում, ահա ինչու այն բացակայում է Ա. Վալդե—Յ. Պոկոռնու հնդեվրոպական լեզուների մեծ բառարանում, Կ. Բրուգմանի, Հ. Հիրտի համեմատական քերականություններում և հնդեվրոպական լեզվաբանության այլ ձեռնարկներում:

⁴ F. Windischmann. Die Grundlage des Armenischen im arischen Sprachstamme.—Abhandlungen der philosoph.-philologischen Classe der kgl. bayerischen Akademie der Wissenschaften, 4, 2 (1846), p. 18. Այդ աշխատությունն սկզբում կարդում ենք. «Հեղինակը այստեղ կարող է նշել, որ այս աշխատությունն ուղղագծված էր տակավին տասը տարի առաջ և որ նրան ինչպես այն, այնպես էլ դրա հետագա ավարտման ժամանակ Պետերմանի գործը (Grammatica linguae Arm.) անծանոթ էր, որը նրա ձեռքն ընկավ շատ ավելի ուշ: Այստեղ բերված արդյունքները, հետևաբար, Պետերմանից բոլորովին անկախ են և ծառայում են փոխադարձ հաստատմանը, եթե դրանք համընկնում են վերջինիս տվյալների հետ»:

⁵ P. de Lagarde. Zur Urgeschichte der Armenier. Ein philologischer Versuch. Berlin, 1854, S. 239.

⁶ P. de Lagarde. Armenische Studien. Göttingen, 1877, S. 146.

⁷ F. Justi. Handbuch der Zendsprache. Leipzig, 1864, S. 88a.

⁸ S. Derivischjan. Das altarmenische k'. Wien, 1877, S. 76.

⁹ «Հանդես ասորյայ», 22 (1908), էջ 213 և նախորդ:

¹⁰ Հ. Աճատյան. Հայերեն արմատական բառարան. Երևան, 1979, հ. 4, էջ 337 և նախորդ:

4. Հայերեն վեր բառը բացատրելու համար մինչ այժմ առաջարկված բոլոր ստուգաբանությունները շատ հիմնավոր քննադատությունների տեղիք են տալիս՝ երբեմն իմաստաբանական, իսկ ավելի հաճախ հնչյունաբանական կարգի: Նման ստուգաբանությունները կարող են հաստատել վոյտերյան այն կծու բնորոշումը: Թե լեզվաբանությունը մի գիտություն է, «որտեղ ձայնավորները ոչինչ չարժեն, իսկ բաղաձայնները՝ շատ քիչ բան»:

Նախ և առաջ, ինչ վերաբերում է ձայնավորին, ապա շեշտյալ վանկի հայ. է-ն (անշեշտ վանկում ի-ի հետ հերթագայվող) ծագում է բնիկ հնդեվրոպական *e/o* երկբարբառներից: Այնինչ հայ. վեր-ի հետ համեմատվող բառերից ոչ մեկը (Վ. Պատրուբանիի ստուգաբանությունը երևակայությունից արված վերացարկում է) անկասկած այդ բնիկ երկբարբառները չեն ենթադրում:

Հայերեն նույն այդ է ձայնավորը կարող է նաև առաջանալ երկբարբառից, որը հայերենում զարգացել է երկրորդաբար. դա հայ. բերե < բերե-յ (-i < *-(i), բերե < *բերե-յր և այլն դեպքն է:

Վերջապես հայերեն է ձայնավորը (նախաշեշտ վանկում ի-ի հետ հերթագայվող) ի հայտ է գալիս հատկապես իրանական ծագման փոխառություններում՝ բնիկ իրանական *ai*-ի համապատասխանությամբ, որը միջին իրանականում դարձել է *ai*:

5. Հայերեն վեր-ի ոչ միայն ձայնավորը, այլ նաև բաղաձայնը մեղ ստիպում են մի կողմ դնել մինչ այժմ առաջարկված համեմատությունները: Հայերեն բառի սկզբի բաղաձայնը շոշափում է հայերենի հնչյունաբանության դեռ հակասական և վիճելի մի հարց, որ հարմար ենք գտնում խնդրո առարկա դարձնել: Խոսքը հայերենում ձայնավորից առաջ բնիկ **v*--ի արտացոլման մասին է:

2. Հյուբշմանն արդեն այդ դիրքում նշում էր հնդեվրոպական **v*--ի երկու արտացոլում՝ գ և վ¹²: Նույն տեսակետն էր պաշտպանում նաև Ա. Մեյնեն, որը բացահայտորեն ասում էր. «Բառասկզբում հնդեվրոպական **v*-ն վերածվում է բաղաձայնի և հանգում **g*--ի, ինչպես բրիտոներենում, որտեղից էլ՝ գ, կամ դառնում է վ¹³: Գ. Ռ. Զոլտան շնայած գրում է, որ «հայերեն բառի սկզբում հնդեվրոպական **v*-ն կանոնավորապես ներկայացված է գ-ով», բայց և հետո ավելացնում է. «...այդուհանդերձ դրա կողքին կան դեպքեր, իհարկե, երբ այդ դիրքում հայերենում վ է ի հայտ գալիս... երկակի փոխարինման փաստը, սակայն, կասկածելի չէ»¹⁴:

2. Պեդերսենը այլ կարծիքի էր: Նա բոլորովին չէր կասկածում, որ «բառասկզբում հնդեվրոպական *v*-ն հայերենում միշտ տալիս է գ»¹⁵: Ռոբերտ Գոդելը գրում է. «Որպես կանոն **v*-ն արտացոլված է գ-ով (հավանաբար **g*--ի միջոցով), բացառությամբ բառավերջում ձայնավորից հետո դիրքի: Բայց քիչ հետո ճշգրտում է. «Վերևում ձևակերպված կանոնը, անկասկած, չի ընդգրկում բոլոր փաստերը: Բառասկզբի **v*-ն վ-ով է արտացոլված վայ-ում (լատ. *uae*, գոթ. *wai*): Բայց և այնպես **v*-ի այսպիսի զարգացման մեկ այլ բառում չենք հանդիպում»¹⁶:

¹² G. Bolognesi. Sul vocalismo degli imprestiti iranici in armeno. — Ricerche Linguistiche, 2 (1951), pp. 141—162.

¹³ H. Hübschmann. Armenische Grammatik. Erster Teil: Armenische Etymologie. Leipzig, 1897, S. 407, 494—495.

¹⁴ A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 1936, p. 49.

¹⁵ G. R. Solta. Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen. Eine Untersuchung der indogermanischen Bestandteile des armenischen Wortschatzes. Wien, 1960, S. 451—452.

¹⁶ H. Pedersen. Zur armenischen Sprachgeschichte. — KZ 38 (1905), p. 194; ահա նաև H. Pedersen. Kleine Schriften zum Armenischen, hrsg. von R. Schmitt. Hildesheim—New York, 1982, S. 56.

¹⁷ R. Godel. An Introduction to the Study of Classical Armenian. Wiesbaden, 1975, pp. 82—83.

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ իմ մի ուսումնասիրության մեջ, կարծում եմ, ներկայացրել եմ ապացույցներ, ըստ որոնց վայ-ն իրոք իրանական փոխառություն է, որտեղ այդ նույն ձայնարկությունը գտնում ենք լավ վկայված ամբողջ միջին իրանականում, ինչպես պարթևերենում՝ wāy, այնպես էլ միջին պարսկերենում՝ wāi¹⁷:

Ձայնարկությունը կարող է հեշտությամբ ծագել բնաձայնությունից, բայց այդ բառային արտահայտիչ ստեղծագործությունն անգամ ենթակա է փոխառման և իսկապես փոխառվել է, ինչպես պարզվում է հոն. wāi օրինակից: Ի դեպ, գալլերեն gwae-ն ցույց է տալիս, որ այդ տարրական բնույթի ձայնարկությունը չի խուսափել *u->gw- հնչյունական անցումից:

Հնդեվրոպական *u--ի հայերենում արտացոլման հարցը վերջերս շոշափել է Ռուդիգեր Շմիտը, որը, եթե անգամ վիճելի է համարում հնդեվրոպական *u->հայ. գ անցման հարցում որպես ապացույց հայ. վայ-ի արժեքը, հանգել է այն եզրակացության, որ «պետք է հնդեվրոպական *u->հայ. վ հնչյունական դարգացումը այսուհետև որպես հնարավորություն դիտվի»: Բայց և անհրաժեշտ է համարում նշել, որ «պայմանները, օրինակ՝ շրջապատը, որտեղ հնդեվրոպական *u-ն հայերենում որպես գ կամ վ է իրացվում, այնուամենայնիվ, բոլոր դեպքերում մնում են չպարզված»¹⁸: Իր «Դասական հայերենի քերականության» մեջ հայ. վ-ի հնդեվրոպական *u-ից սերելու հնարավորությունը նա դարձյալ չի բացառում¹⁹:

Համենայն դեպս ինքը՝ Ռ. Շմիտը և ուրիշ անվանի գիտնականներ հարցին վերաբերող բառերից դուրս են մղել ձևեր, որոնց վ-ն անցյալում դիտվել է հնդեվրոպական *u--ի արտացոլում. հայ. վնց-ը ալլես հնդեվրոպական *uek's-ով չի բացատրվում, այլ՝ *suek's-ով, հայ. վեր-ը հնդեվրոպական *uers չի ենթադրում, այլ՝ *upero- (ավելի ճիշտ՝ *uperi), վառ-ը և վ-ով հայերեն շատ ալլ բառեր անկասկած իրանական փոխառություններ են²⁰:

Կարճ ասած, հնդեվրոպական *u--ի հայ. գ- անցման օրինակները ավելի շատ են և հավաստի, իսկ ուսումնասիրությունների առաջընթացը անընդհատ է՝ ավելի է նվազեցնում և թուլացնում այն ապացույցները, որոնց վրա, թվում էր թե հենվում է հայ. վ-ի հնդեվրոպական *u--ից ծագելու բացատրությունը:

¹⁷ G. Bolognesi. Aspetti lessicali e semantici dell'interferenza nei contatti Interlinguistici tra l'armeno, l'iranico e il greco.—Sincronia, diacronia e cultura. Studi in onore di Luigi Heilmann, Brescia, 1984.

¹⁸ R. Schmitt. Die Lautgeschichte und ihre Abhängigkeit von der Etymologie, am Beispiel des Armenischen.—Lautgeschichte und Etymologie. Akten der VI. Facht. der Indogermanischen Gesellschaft: Wien, 24—29. Sept. 1978. Wiesb., 1980, S. 419—420.

¹⁹ R. Schmitt. Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichen den Erläuterungen.—Innsbrucker Beiträge zur Sprachwissenschaft, vol. 32, Innsbruck, 1981, S. 70

²⁰ Զ. Գրեպինը լիտվ. v]rti «եփել», հին սլավ. vrěti «եփել» բառերի հետ հայ. վառեմ-ի ավանդական համեմատության դեմ առարկում է, որովհետև այդ ստուգաբանությունը անհավանական է փաստորեն ամեն մի հնչյունական առումով: Բառասկզբում սպասվող գ-ի փոխարեն վ է: Եվ իր կարծիքով «չնայած թվում է, թե հնդիրանական ցեղակիցը գոյություն չունի, բայց ամբողջ հնչյունական տեսքը մեզ ստիպում է այն ընդունել որպես իրանական ծագման բառ» (The Armenian Reflexes of IE*w and *y.—REArm, 9 (1972), p. 72): Բուրոգիս վերջերս է. Պ. Հեմպը հերքել է հայ. վառեմ-ի մերձավորությունը լիտվ. v]rti, հին սլավ. vrěti բառերի հետ, «որովհետև հայտնի է, որ պարզ բառասկզբի համար հնդեվրոպական *u-ի հայերեն կանոնավոր արտացոլումը գ է», սակայն նա հայերեն այդ բառը համարում է բնիկ, որի վ-ն ենթադրում է *up կամ *hup- մասնիկով հիմք» (Armenian Miscellanea.—Annual of Armenian Linguistics, 3 (1982), p. 54).

6. Ահա ինչու, երբ հայ. վեր-ը հնդեվրոպական որևէ արմատի հետ անմիջական կապով բացատրելու բոլոր փորձերը ապարդյուն են անցել, ես հիշում եմ Ա. Մեյլեի խոսքը. «Բառի փոխառություն լինելու հավանականությունը միշտ մեծ է, և հին կամ նոր լեզվի ստուգաբանողը, որը դատում է այնպես, որ կարծես բացատրելի բառերը ապրիորի ունեն ամեն հնարավորություն բնիկ լինելու, ենթակա է հաճախակի սխալվելու»²¹։ Անկասկած իրականում վ-ով սկսվող հայերեն բառերի մեծ մասը իրանական ծագում ունեն և կարծում եմ, որ ուսումնասիրությունները պետք է տանել այդ ուղղությամբ, նույնիսկ եթե մինչև այժմ դեռ չի գտնվել իրանական այն բառը, որից ծագում է հայ. վեր-ը։ Բայց պետք է նշել, որ արդեն հնարավոր է եղել բացահայտել որոշ հայերեն բառերի փոխառյալ լինելը, չնայած նրանց իրանական բնօրինակները դեռևս մեզ հայտնի չեն։ Ահա այն օգուտներից մեկը, որ մենք կարող ենք քաղել պահեստի ու ամբարի դեր կատարած հայերեն բառապաշարից, որտեղ պահպանվել են անգամ գրական աղբյուրներում չվկայված իրանական բառեր։ Այս իսկ պատճառով կարելի է ասել, որ Վայդ հայերեն փոխառությունները մեզ շատ օգտակար ինֆորմացիա են տալիս իրանական բառապաշարի մասին և նրա վերաբերյալ մեր գիտելիքները ընդլայնվում են՝ անցնելով վկայված տվյալների սահմանները²²։

Հատկապես հնչյունաբանությունն է մեզ հիմք տալիս հայերեն բառությունների օգնությամբ վերականգնելու իրանական չվկայված բառերը, որոնց գոյությունը, սակայն, հաստատվում է անգամ հնդկական լեզվական համապատասխան նյութով։

Մենք ունենք, օրինակ, հայերեն նիրհ բառը, որը լավ համապատասխանում է վեգ. nīdrā-ին, բայց այդ համապատասխանությունը չի կարելի բացատրել երկու լեզուների ձևերը ուղղակի հնդեվրոպականին հանգեցնելով, այլապես հայերենում կունենայինք *նիրա և ոչ նիրհ (հմմտ. հայ. քիրա, որ լավ համապատասխանում է հուն. κίρα, լիտվ. swēdri ձևերին)։ Հնչյունական օրենքները մեզ ստիպում են, այսպիսով, վերականգնել վեգ. nīdrā-ին համապատասխանող իրանական *nīdrā-ձև, որը տվել է միջին իրանականում *nīhr, որտեղից էլ գալիս է հայերեն նիրհ փոխառությունը, այնպես, ինչպես վեգ. mudrā-ին համապատասխանող իրանական *mudrā-ն միջին իրանականում տվել է լավ վկայված muhr բառը, որտեղից էլ գալիս է հայերեն մուրհ-ակ-ը։

Նույն ձևով հայ. պարաւանդ-ը «ձեռքի կամ ոտքի կապ, կապանք» համապատասխանում է սանսկր. padabandha-ին՝ բաղկացած pada-ից «ոտք» և bandha-ից «կապ», այսինքն՝ «ոտքերի համար կապ, պարան, որով կապում են կենդանիների ոտքերը»։ Հայերեն համարժեքը ռոնակապ(անք)-ն է՝ բաղկացած ռոն և կապ(անք) բառերից։ Սակայն բնիկ հայերեն բառերում ծագումնաբանական շրջնային խուլ հպական ք-ն բառասկզբում դարձել է հ, որը կարող է անգամ ընկնել, իսկ ատամնային ձայնեղ հպականը պետք է տարա՛ն։ Հետևաբար հայերեն պարաւանդ-ի և սանսկր. padabandha-ի միջև պետք է ենթադրել իրանական *padabanda- (միջձայնավորային Ե-ի շփականացմամբ, ինչն առկա է արդեն ուշ շրջանի Ավեստայի լեզվում), որը միայն կարող է բացատրել հայերեն բառը։ Եվ իսկապես, այս պարագաներում պարթևական հին փոխառությունները հայտաբերում են իրանական ատամնային ձայնեղ բաղաձայնի սովորական անցում հայերեն ք-ի, որը շատ ակնհայտորեն երևում է բազմաթիվ օրինակներից, ինչպես.

²¹ A. Meillet. La méthode comparative en linguistique historique. Oslo, 1925, p. 35.

²² E. Benveniste. Éléments parthes en arménien.—REArm, I (1964) p. 1.

հայ. ապարանք	միջին իր. apadan,	հին պարսկ. apadāna-
հայ. ապիրատ	միջին իր. apēdat	
հայ. արոյր	միջին իր. rod	
հայ. բոյր	միջին իր. bōd	
հայ. խոյր	միջին իր. xōd	
հայ. աշխար	միջին իր. axšad	
հայ. արեւն	միջին իր. awdēn և այլն:	

7. Ուրեմն հայերենում հաճախ ունենք²³ իրանական բառի գոյություն միակ վկան, որի համապատասխանը լավ վկայված է լինում սանսկրիտում: Հենց այստեղ է հայ. վէր-ով առաջադրված ստուգաբանական խնդրի բանալին:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ սանսկրիտում առկա է հայ. վէր-ի իմաստային բոլոր երանգները ծածկող vedha- «վերք» բառը: Նույնիսկ այս դեպքում հնչյունական օրենքները մեզ ակնհայտորեն խանգարում են ուղղակիորեն համեմատելու հայերենի և սանսկրիտի հիշյալ բառերը, բայց ամեն ինչ կարգի է ընկնում, երբ սանսկրիտի և հայերենի միջև ենթադրում ենք իրանական միջնորդավորվածություն: Այսինքն՝ սանսկր. vedha-ն ենթադրել է տալիս իրանական *vaida- համապատասխանություն, որն անցնելով *veida- ձևով, պետք է հանգեր միջին իրանական *vēd-ին: Իրանական այս բառից է գալիս հայ. վէր-ը, որը ի հայտ է բերում իրանական և հատկապես պարթևական ծագման փոխառություններին հատուկ միանգամայն կանոնավոր հնչյունական անցումներ, առաջին հերթին ի նկատի ունենք պարթևական ատամնային ձայնեղ բաղաձայնի հայերենում մշտապես Ե անցումը:

Ի հաստատումն վերն ասվածի և նվազագույն կասկածն իսկ ցրելու համար բավական է ներկայացնել այն ապացույցները, որ կարելի է բխեցնել միանգամայն անհերքելի հետևյալ համապատասխանություններից.

սանսկր. ni-ved-, ալ. ni-vaēd-, միջին իր. ni-vēd-, հայ. փոխառյալ նուեք²⁴

սանսկր. pra-ved-, ալ. fra-vaēd-, միջին իր. fra-vēd-, հայ. փոխառյալ ֆրավեք

սանսկր. prati-ved-²⁵, ալ. paiti-vaēd-, միջին իր. pat-vēd-, հայ. փոխառյալ պատուեք²⁶:

Այս համապատասխանությունները ընդգծում են այն համեմատության հավաստի լինելը, որ մենք վերականգնել ենք, սանսկր. vedha-, իր. *valda-, մ. իր. *vēd, հայ. փոխառյալ վեք:

Սանսկրիտը, որը մեզ հանգեցրեց հայ. վէր բառը որպես իրանական փոխառություն ճանաչելուն, օգնում է նաև տարբերելու բառային երկու սկզբունաղբյուր, որոնց ձևերը իրանականում (որտեղ հնդեվրոպական ծագման *d-ն և *dñ-ն հանգել են միևնույն d բաղաձայնին), հետևաբար նաև հայերեն փոխառություններում համընկել են, բայց սանսկրիտում մնում են տարբեր, որն անփոփոխ պահպանում է ծագումնաբանական երկու բաղաձայնները:

²³ E. Benveniste. Mots d'emprunt iraniens en arménien.—BSL. 53 (1958), հատկապես էջ 82 և հտ. նույնի՝ Éléments parthes en arménien.—REArm, 1 (1964), էջ 1 և հտ. G. Bolognesi. Problemi di geografia linguistica relativi all'area iranica e armena.—Actas del V Congreso Internacional de Estudios Lingüísticos del Mediterráneo, Madrid, 1977, pp. 534—536.

²⁴ Վ-ից առաջ դիրքում իրանական ni-ի հայերեն արտացոլումը լավ հայտնի է այնպիսի փոխառություններով, ինչպես հայ. նուազ, մ. իր. nivāz, հայ. նուարտան, իր. *nivartana—սանսկր. nivaritana- և այլն:

²⁵ Սանսկրիտ prati- բայական նախածանցը իրանական pati-, ալ. paiti-ի ճիշտ համապատասխանությունն է:

²⁶ Վ-ով հաջորդված միջին իրանական pat- բայական նախածանցի հայերեն հնչյունափոխությունը լավ հայտնի է այնպիսի փոխառություններով, ինչպես հայ. պատուաստեմ, մ. իրան. patvastan:

Այսուհանդերձ սանսկրիտում vedha- «վերք, խոց» գոյականի կողքին ունենք նաև թույլ ձայնավորմամբ բայարմատ՝ vidh-ya-ti «վիրավորում է, խոցում է», որին կարելի է միացնել ավեստայական ašəmnō.vid- բարդության երկրորդ բաղադրիչը (լիաձայնությամբ արմատով բառերին Քր. Բարթոլոմեոսն ավելացնում է նույնիսկ Ավեստայի vaēdā- «հարձակողական զենքի անուն» ձևը²⁷):

Կարևոր է նաև, որ սանսկրիտ vidh-ya-ti բայի համապատասխանությունը գտնում ենք միջին իրանականում՝ խոտաներեն bid-/bista- «խոցել» ձևում²⁸։ Հայերեն վեր-ի իրանական ծագումը, այսպիսով, էլ ավելի լավ է հիմնավորվում։

Տ. Սակայն միջին իրանական տեքստերը, ինչպես հայտնի է, ուսումնասիրողների համար հաճելի անակնկալների անսպառ աղբյուր են։

Թուրքանի մանիքեյան մի տեքստում կարդում ենք.

'pryd 'wd 'stwwd / hyb byh yyšw' / zyndkr šhr 'y nwg /
mwrđ'hyz w'bryg'n / 'yg xwd m'd zywyn'g / 'yg 'wyš'n ky pd /
xyym 'wd wy[-] 'yg / 'z u wrzwg mwrđ / hynd 'wd bšyhk /
'w 'wyš'n ky pd / wym'r 'y ns'h 'by / 'ws grdynd.

Վ. Հենինգը, որ առաջինն է այս տեքստը հրատարակել, տալիս է դրա հետևյալ թարգմանությունը.

Թող օրհնվի և գովաբանվի Հիսուսը,
կենդանություն տվողը, նոր հավերժը, մեռելների ճշմարիտ հարություն տվողը,
բանդի նա է կենսատու մայրը նրանց, որոնք
ազա՛հության և ցանկասիրության վերքերից մեռել են և
բժիշկը նրանց, որոնք մարմինների հիվանդություններից անգիտակից են դառնում²⁹,

ինչպես կարելի է նկատել, wy[.] բառը չի թարգմանվել, բայց տողատակի ծանոթության մեջ Հենինգը մեզ է ներկայացնում իր զանազան վարկածները այդ առեղծվածային բառը վերականգնելու և մեկնաբանելու համար։ *wy[š] «թուլն»^(*)։ Եղած տվյալներով ավելի հարմար կլինեին վերականգնել *wy[b]=wdyb միջին իր. մանիքեյան I, իսկ լավագույնը wy[m]-ն է, որն իր սովորական նշանակությամբ («ժայռ») այստեղ, սակայն, անօգտագործելի է։ wy[m]-ը որպես xšm-ին հանգաբառ, ընդհակառակը, լավ կտեղագրվեր Հ. Ա. Վինկելերի կողմից ձևակերպված «այլ-բեն կանոնով» (տե՛ս Littmann-Festschrift 1 ss.)։ Ոչ մի դեպքում wy[m'r]-ի համար բավարար տեղ չկա։ Իսկ բառացանկում Հենինգը բառը գրանցում է wym^(*) վարկածային ձևով³⁰։

Վերը նշված տեքստում զարմացնում է wy[.] -ի և անմիջապես նրան նախորդող xyym «վերքեր» բառի միջև սերտ կապը. երկու համանիշների, նույնիսկ զուգադասման (hendiadys) առկայության տպավորություն ենք ունենում։ Քանի որ տեքստը գրի է առնված միջին պարսկերենով, wy[.] -ի ամենահարմար և գոհացուցիչ վերականգնումը պետք է համարել wy[y]=wēy ձևը, այսինքն՝ պարթևական *wyd=wed < իրանական *valda=սանսկր. vedha- «վերք» ճիշտ համարժեքը։ Իսկ միջին պարսկ. *wēy, պարթ. *wēd > հալ. վեր հարաբերությունը նույնանում է արդեն հաստատված հետևյալ համապատասխանության հետ.

²⁷ Ch. Bartholomae. Altiranisches Wörterbuch. Strassburg, 1904, S. 1320.

²⁸ I. Gershevitch. The Avestan Hymn to Mithra. Cambridge, 1959, p. 192.

²⁹ W. Hennig. Ein manichäisches Bet- und Beichtbuch. Berlin, 1937, S. 23.

³⁰ Նույն տեղում, էջ 116։

միջին պարսկ. bōy	պարթ. bod > հայ. բոյր
միջին պարսկ. rōy	պարթ. rod > հայ. արոյր
միջին պարսկ. xōy	պարթ. xod > հայ. խոյր

Մեկ անգամ ևս հայերենի միջոցով վերականգնված իրանական նախատիպը, այսպիսով, հնարավորություն է տալիս տեքստում ճանաչելու միջին իրանական մի նոր բառ, որը հիշյալ արձանագրության մեջ արգի գրությամբ կազմում է իրանական բառապաշարի եզակի դեպքը (𐭠𐭣𐭥𐭥𐭥):

Մինչ իմ հոգովածը հրատարակության ընթացքում էր, Մերի Բոյսը 1983 թ. նոյեմբերի 6-ի նամակով հաղորդել է, որ իր «Մանիքեյան խոստովանագիրք և աղոթագիրքը» (Բեռլին, 1937) հրատարակելուց հետո Վ. Հենինգը փոխել է կարծիքը wy[.] բառի ներառման ու մեկնաբանման իր նախկին փորձի վերաբերյալ և, անձամբ քննելով xyym 'wd wy[.] բառերը որպես զուգադասում, ըստ հայ. վեր-ի նա wy[.]-ը վերականգնում է *wyr ձևով:

Ահա ինչու այդ տեքստի վերահրատարակության մեջ Մերի Բոյսը, օգտվելով իր ուսուցչի բանավոր հաղորդումից, wy[.]-ը վերականգնել է որպես *wyr³¹:

Բայց այդ վերականգնումը իրանական բառի ճիշտ ստուգաբանության վրա չի հենվում: Ճիշտ է, տեսականորեն հայ. վեր-ը նույնքան լավ կարող է ենթադրել պարթևական *wyr նախատիպ, որքան և *wyd, սակայն իրականում համոզիչ ստուգաբանության չափանիշներով պարթևական *wyd-ն է (միջին պարսկ. *wyy), որ պետք է դիտել հայերեն վեր բառի աղբյուրը: Իսկապես, եթե *wyr-ը «վերք» (<իր. *vaira-) ստուգաբանորեն մնում է մութ, ապա *wyd-ը (<իր. *vaida-) բացատրելի է, ինչպես ցույց տվեցինք սանսկրիտի vedha- «վերք» բառով, որը դրա ճիշտ համարժեքն է:

Մերի Բոյսը, որին շնորհակալ եմ համագործակցելու համար, իր նամակում գրում է, որ այդ ստուգաբանական դատողությունները հիշյալ միջին պարսկերեն տեքստում *wyy (— պարթ. *wyd) վերականգնելը «պետք է որ շատ ավանական թվա և բավարար չափով համապատասխանի ձեր առաջարկած ստուգաբանությանը, որը ես գտնում եմ չափազանց հրապուրիչ»:

9. Ստուգաբանական այս վերլուծությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

Առաջին. մեկ անգամ ևս հիմքից զուրկ ստուգաբանությամբ բնիկ համարված հայերեն բառը պարզվում է, որ իրանական փոխառություն է:

Իրկորոդ. վատ վկայված կամ բոլորովին չվկայված իրանական բառը (որի ճիշտ համապատասխանությունը, սակայն, գտնում ենք սանսկրիտում) հայերեն բառի միջոցով վերականգնելու հնարավորության մի նոր փորձ է ձեռք բերվել: Հայերենի փոխառությունների ուսումնասիրությունը, այսպիսով շարունակում է փոխադարձաբար հարստացնել թե՛ փոխառու, թե՛ փոխատու տվյալ լեզուները:

Երրորդ. հնարավոր եղավ նաև նպաստել Թուրքիայի մանիքեյան մի տեքստի ճշգրտմանը՝ առաջարկելով միջին իրանական տվյալ բառի ստույգ վերականգնումը, որը նախկինում ճիշտ չէր ընթերցված և հետևաբար վատ էր վերականգնված:

Չորրորդ. մեկ անգամ ևս ձևափոխված հայերեն բառի վ-ն հ.-ե. ծագումնաբանական *վ-ին հանգեցնելու փորձերը: Չայնավորից առաջ ծագումնաբանական *վ-ի հայերենում գ հնչյունափոխությունը անժխտելի է և կասկած

³¹ M. Boyce. A Reader in Manichaean Middle Persian and Parthian. Texts with Notes.—Acta Iranica, 9, Troisième Série: Textes et Mémoires, vol. 2, Téhéran—Liège, 1975, p. 156, հմտ. նույնի՝ A Word-List of Manichaean Middle Persian and Parthian.—Acta Iranica, 9a, Troisième Série: Textes et Mémoires, vol. 2—Supplément. Téhéran—Liège, 1977, pp. 97, 160.

չի հարուցում, մինչդեռ հայ. *vē*-ն մեծ մասամբ ցույց է առնում տվյալ բառի այլ հատկապես իրանական լեզուներից փոխառյալ լինելը:

Ընդհանուր եզրակացությունը, որին հանգում ենք մեր հեաազոտության վերջում, այն է, որ ստուգարանությունը և պատմական հնչյունաբանությունը լեզվաբանության անթափանցելի հատվածները չեն, այլ ավելի շուտ փոխադարձ լրացմամբ ու կախվածությամբ խիստ կապված երկու հաղորդակից անոթներ են³², քանի որ լեզվաբանությունը բացառապես այնպիսի մի գիտություն է, որանդ ամեն ինչ փոխադարձ կապի մեջ է: Իսկապես, եթե մի կողմից հնչյունական օրենքները մերժում են հայ. *vē*-ը որպես բնիկ բառ ներկայացնող նշված ստուգարանությունները և մեզ պարզում են նրա իրանական փոխառություն լինելը, մյուս կողմից այս փոխառության բացահայտումը և նրա ճիշտ վերլուծությունը մի նոր լույս են սփռում ոչ միայն փոխառող, այլ նաև փոխառու լեզվի պատմության վրա:

Յրանեսերենից քաղմանց Մ. Ա. Աղաբեկյան

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ И ФОНЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Джанкарло БОЛОНЬЕЗИ (Италия)

Отвергая многочисленные этимологии армянского слова *vēg* «рана», автор статьи предлагает новую, более убедительную его этимологию. В санскрите имеется форма *vedha* «рана», покрывающая все семантические нюансы арм. *vēg*, но которая, разумеется, не может быть непосредственным источником армянской формы *vēg*. Однако санскр. *vedha* предполагает иранское соответствие **vaida*, которое через форму **veida* должно восходить к среднеиранскому корню **vēd-*. Этот последний и мог служить праформой для арм. *vēg*. Сказанное подтверждается следующими фактами. В известном сложном слове *asənpōvid* наличествует форма *vid-* со слабой огласовкой, которой соответствует санскритский глагольный корень *vidh-* (*vidh-yati* «ранит»). Что касается формы *vēd*, то она засвидетельствована в одном турфанском тексте, опубликованном В. Хеннингом, в виде *wy[.]*. Автор статьи по тексту восстанавливает *wy[.]* как **wy[y]=*wēy*, т. е. парф. **weid=*wēd*.

³² Իսկ Ռ. Շմիտի համար հնգվորդական **v-*ի հնչյունափոխությունը հայերենում հենց ժողովրդին է հայերենի պատմական հնչյունափոխության և ստուգարանության այն խնդիրներից... որոնց միջոցով ներավոր է լինում ակնհայտ դարձնել պատմահասկատական լեզվաբանության այդ սրճու մասերի փոխառությունը: տե՛ս R. Schmitt. Die Lautgeschichte und ihre Abhängigkeit von der Etymologie, am Beispiel des Armenischen, p. 416: